

ներուն նման վէճեր ունեցաւ նաև այն առիւծներուն հետ որ գոյութիւն ունէին Յորդանանի թաւուտներուն մէջ, գոնէ մինչև Միջին դար, եթէ պէտք է հաւատալ ուղեգիր վանական Դանիէլի և Փոկասի (R. Bl. 1932, էջ 254):

դ) Ուղեգիր-ուխտաւոր Դանիէլ կը գրէ թէ Մար-Սարայի արեւմտեան կողմը, Ժայռի մը մէջ նշանաւոր քարայր մը կար որ կը պարունակէր Ս. Կուսին նուիրուած եկեղեցի մը: Այս քարայրը Աստուծոյ կողմէ Մար-Սարայի յայտնուեցաւ հրեղէն սիւնի մը միջոցաւ. հեղեղատին եզերքը առանձին բնակարան մըն էր ան: Այն խուցը որուն մէջ ի սկզբան սուրբը կը բնակէր կէս մղոն հեռու էր արդի վանքէն, եւ այդ տեղէն էր որ Աստուած ցոյց տուաւ հրեղէն սիւնով մը այն տեղը զոր այժմ կը գրաւէ Սարայի վանքը (P. T. S. հատ. Գ. էջ 34): (Մար-Սարայի պատմութեան և նկարագրութեան, ինչպէս նաև տեղւոյն հայ Միաբանութեան ծագման մասին տեսնել Հ. Վ. Ե. էջ 248-360):

ԺԱ. ԲԵԹՂԵ ՀԷՄԷՆ ՔԵՐՐՈՆ

1. Բեթղեհէմէն դուրս ելլելով՝ Երուսաղէմէն Քերրոն տանող ճանապարհին ուղևորները կը միանան Պէյթ ձալայի գեղատեսիլ մրգաստաններուն գիմացը: Աջին՝ արգասաբեր հովտի մը մէջ կը տեսնուի կյ խըսը (կանաչագեղ) գիւղը, անուն մը զոր Արաբները կուտան Ս. Գէորգի և Եղիա մարգարէին: Հոն Ս. Գէորգի անունով եկեղեցի մը կայ ուր յիմարներ կը բժշկուին: Այսպիսի մարգրիկ երբ հոն կը բերուին՝